

առաջին եւ ընդ երկրորդ նուագն եւ ընդ անկն միանգամայն՝ ութնտասն ամ. եւ թաղեցաւ յաթոռ իւր յետին՝՝ իԴրագարկ։- Վէճ մեծ եղեւ վասն յաջորդի նորին, զի չէր՝ իմիջի Լեւոն, որոյ հաւանութեամբ կարգեալ էին յետին չորք կաթողիկոսունքն. երկուք էին այժմ ընծայեալքն՝ իբազմաց կամ՝ իգլխաւորաց. Կոստանդին Լամբրունեցի՝ որդին Հեթմոյ-Հեղեայ՝ որ յամենայնի ձեռներեցն էր՝ յառաջ մատուցանէր զԳրիգոր վարդապետն Սկեւռացի, այր, որպէս բազում անգամ(մոլեաւ՝ իպատմութեանս, արժանաւոր, առաքինի, զգօն եւ գիտնական, եւ հասունացեալ հասակաւ. իսկ Կոստանդին Պայլ՝ զանուանակից իւր գտէր Կոստանդին Բարձրբերդցի, որ ցայս վայր չէր երեւեալ՝ իպատմութեան, եւ եպիսկոպոս այնր բերդի եւ նահանգի թուի գոլ, որում աշխարհօրէն տիրէր ինքն Պայլն. սա ընտրեալ յոլովից վիճակաւ գումարելոցն եպիսկոպոսաց եւ վարդապետաց, օծաւ կաթողիկոս Հայոց, եւ երկայն ամօք (քառասուն եւ վեց ամ) եկաց յաթոռն, գրեաթէ գոյգ զամենայն ժամանակ թագաւորութեանն Հեթմոյ։



նկար 232. Կնիք Կոստանդինի կաթողիկոսի²³⁸։

Դ. Ընտրութիւն Փիլիպպոսի Անտիոքացոյ ՚ի փեսայութիւն Զապելի, եւ ՚ի թագաւորութիւն Հայոց, եւ մերժումն. եւ փոխանակ նորա Հեթմոյ որդւոյ Կոստանդինի Պայլի փեսայանալ եւ թագաւորել

Իբրեւ կարգեցաւ գլուխ եկեղեցւոյն Հայոց, որ եւ առանձինն իմն հովուապետ եւ հայր էր տանն Սիսուանայ՝ յայնմ ժամանակի, եւ

²³⁸ Սմին Ա Կոստանդինի թուի կնիքս, որոյ կաղպար գտաւ՝ եկեղեցւոյ Sééz քաղաքի Փռանկաց։

ի պեղման յա